ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հուլիսի 3 -ին, N 133-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով,8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով,12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակներում որոշման հավելվածի 21-րդ և 22-րդ կետերը՝

որոշում եմ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակներում 2024 թվականի պետական աջակցության ծրագրի իրականացման մոնիթորինգի հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝

2.1 Իրականացնել ընտրանքային մոնիթորինգ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ մարզի շահառուների թվի առնվազն 20 %-ի չափով մինչև 2024 թվականի բերքահավաքի ավարտը:

2.2 2024 թվականի մոնիթորինգից հետո առավելագույնը 1 ամսվա ընթացքում ամփոփել իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ծրագրի 20-րդ կետով նախատեսված ձևաչափով ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 03.07.2024 16:49:15 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2024թ.
հուլիսի 3 N 183-Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Յու.Ազատյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Ա.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության խորհրդական

Թ.Թովմասյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Գ.Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ